14.05.2019 թ. կնքված **ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2019-15-08** պայմանագրի մատակարարման ժամկետի վերաբերյալ

**համաձայնագիր № 4**

ք. Երևան 29 նոյեմբերի 2019թ.

ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս գլխավոր տնօրեն՝ Արտավազդ Վանյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և «Մեդիսար» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Մ.Գաբրիելյանի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, հիմք ընդունելով «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2019-15-08» պայմանագրի 8.6 կետը և 2017 թ-ի մայիսի 4-ի 526-Ն որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**Համաձայնագրի առարկան**

1. Հաշվի առնելով պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված զեկուցագիրը հետագա համագործակցության համար կողմերը որոշեցին 2019թ. մայիսի 14-ին կնքված № «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2019-15-08» պայմանագրի 6-րդ չափաբաժնի մատակարարման ժամկետը երկարաձգել 15 օրացուցային օրով:
2. Սույն համաձայնագիրը համարվում է № «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2019-15-08» գնման պայմանագրի անբաժանելի մաս:
3. Սույն համաձայնագրում չնշված կողմերի գնման պայմանագրով նախատեսված մյուս կետերը մնում են անփոփոխ:
4. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

**Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ԱՆ «ՀՎԿ ազգային կենտրոն» ՊՈԱԿ | «Մեդիսար» ՍՊԸ |
| Հասցե՝ ք.Երևան, 0025, Մ.Հերացի 12 | Հասցե՝ ք.Երևան, Գետառի 4/9 |
| Երևանի թիվ 1 ՏԳԲ | Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900018004649 | Հ/Հ 2050022415811001 |
| ՀՎՀՀ 02625503 | ՀՎՀՀ 02555635 |
| Գլխավոր տնօրեն՝ Ա. Վանյան | Տնօրեն՝ Մ.Գաբրիելյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |